

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունն՝ ի դեմս  
Առողջապահության նախարարության,

և Կատարի Պետության Կառավարությունն՝ ի դեմս Հանրային առողջության  
նախարարության,

այսուհետ՝ «Կողմերը»,

Երկկողմ հարաբերությունների ամրապնդման և երկու երկրների միջև  
համագործակցության ամրապնդման շրջանակներում,

**Գիտակցելով** հանրային առողջության և առողջապահական  
ծառայությունների բարելավման կարևորությունը՝ ի շահ ներկա և ապագա  
սերունդների,

**Հավատալով**, որ հանրային առողջության և առողջապահական  
ծառայությունների բարելավումը կարող է դյուրացվել երկու կողմերի սերտ  
համագործակցության միջոցով,

**Ձգտելով** զարգացնել առողջապահական ծառայությունները, առողջության  
խթանումը և բարեկեցությունը, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն  
ներկայացնող այլ թեմաներ

Եվ **ցանկանալով** ավելի ամրապնդել համագործակցությունը

առողջապահության և բժշկական հետազոտությունների ոլորտում,

համաձայնեցին հետևյալի մասին.

## **Հոդված 1**

### **Նպատակները**

Սույն Համաձայնագրով սահմանված նպատակներին հասնելու համար Կողմերը, ցանկացած այլ արտակարգ կամ կարևոր ոլորտների հետ մեկ տեղ, համագործակցում են հետևյալ բնագավառներում.

1. Առողջապահության ոլորտում, տեխնոլոգիաների, առողջապահական համակարգերի և առողջության առաջնային պահպանման համակարգերի կիրառման հետ կապված հետազոտություններ:

2. Երկու երկրներում առողջապահական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության, ինչպես նաև երկու երկրներում թողարկված բժշկական և գիտական թերթերի, ամսագրերի, հրապարակումների և տեղեկագրերի փոխանակում:

3. Բժշկական տեղեկատվական համակարգերի և համաճարակաբանության ստանդարտացում հաղորդակցությունը, վիճակագրական մեթոդները և տեղեկության փոխանակումը ներառելու նպատակով:

4. Տրամադրվող առողջապահության որակի չափանիշների, դասակարգման և մակարդակի պահպանում:

## **Հոդված 2**

### **Համագործակցության ոլորտները և ձևերը**

I. Կողմերը համաձայնում են համագործակցել ստորև ներառված, սակայն սույնով չսահմանափակված ոլորտներում.

1. Առողջապահության ենթակառուցվածք,

2. Հիվանդությունների կանխարգելում և բուժում,

3. Թվային առողջապահություն,

4. Բժշկական կրթություն, վերապատրաստում և շարունակական մասնագիտական զարգացում,
5. Գենոմիկա, գենետիկական և անհատականացված բժշկություն,
6. Հակամանրէային դիմադրություն,
7. Հանրային առողջապահություն,
8. Առողջության ապահովագրություն,
9. Նյարդագիտություն,
10. Բժշկական գրոսաշրջություն:

II. Կողմերը պայմանավորվեցին, որ սույն Համաձայնագրից բխող համագործակցությունը կունենա հետևյալ ձևերից որևէ մեկը.

1. Բժշկություն և հետազոտություն,
2. Փորձի փոխանակում,
3. Պատվիրակությունների փոխայցելություններ,
4. Հանդիպումների անցկացում երկու Կողմերի լիազոր մարմինների ներկայացուցիչների և ոլորտի այլ փորձագետների միջև,
5. Համաժողովների, սիմպոզիումների, սեմինարների և պանելային քննարկումների կազմակերպում և մասնակցություն,
6. Բժշկական անձնակազմի պատրաստում և վերապատրաստում,
7. Դասախոսող և վերապատրաստող մասնագետների, ինչպես նաև բժշկական հաստատության ուսանողների փոխանակում,
8. Պետական և մասնավոր հատվածի համագործակցություն,
9. Ներդրումներ առողջապահության ոլորտում,
10. Համագործակցության ցանկացած այլ ձևեր, որոնք փոխադարձ հետաքրքրություն են ներկայացնում Կողմերի համար:



### **Հոդված 3**

#### **Ծախսերը**

Յուրաքանչյուր Կողմ հոգում է իր ծախսերը ինքնուրույն՝ սույն Համաձայնագրի համապատասխան ծրագրերի և գործողությունների իրականացման հետ կապված, եթե Կողմերն այլ որոշում չեն կայացնում, կամ այդ նպատակով ֆինանսավորման այլ միջոցներ առկա չեն:

### **Հոդված 4**

#### **Վերահսկողությունը և հետևողականությունը**

Կողմերը ստեղծում են համատեղ կոմիտե, որը բաղկացած է Կողմերի կողմից նշանակված հավասար թվով ներկայացուցիչներից: Կոմիտեն անհրաժեշտության դեպքում անցկացնում է իր հանդիպումները Հայաստանի Հանրապետությունում և Կատարի Պետությունում՝ հաջորդաբար, սույն Համաձայնագրի կատարումը վերահսկելու և սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցության մանրամասները լրացուցիչ մշակելու համար:

### **Հոդված 5**

#### **Վեճերի և հակասությունների կարգավորումը**

Կողմերի միջև սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում առաջացող ցանկացած վեճ կամ հակասություն լուծվում է փոխհամաձայնությամբ՝ դիվանագիտական ուղիներով:

### **Հոդված 6**

#### **Փոփոխություններ կատարելը**

Սույն Համաձայնագրի դրույթներում կամ տեքստում փոփոխություններ կարող են կատարվել երկու Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Այդ փոփոխություններն ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով

սահմանված ընթացակարգերով:

## Հոդված 7

### Ուժի մեջ մտնելը, տևողությունը և դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկու պետություններում կիրառվող անհրաժեշտ բոլոր ներքին ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրը:

2. Սույն Համաձայնագիրը վավեր է երեք (3) տարի ժամկետով և ինքնաբերաբար երկարաձգվում է նույն ժամկետով, եթե Կողմերից որևէ մեկը մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով, դադարեցման օրվանից առնվազն վեց (6) ամիս առաջ գրավոր չի ծանուցում այն դադարեցնելու իր մտադրության մասին:

3. Սույն Համաձայնագրի դադարեցումը չի ազդում վերջինիս շրջանակում նախաձեռնված ու դադարեցման օրը չավարտված աշխատանքների իրականացման վրա, եթե Կողմերն այլ պայմանավորվածություն ձեռք չեն բերում:

**Ի հաստատումն որի**, ներքոստորագրյալները, լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից, պատշաճ ձևով ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Մույն համաձայնագիրը կատարված և ստորագրված է Դոհայում, 2022թ. հունիսի 13-ին, երկու բնօրինակից՝ հայերենով, արաբերենով և անգլերենով, որոնք հավասարազոր են: Մույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության կողմից**



**Նախարար՝ Անահիտ Ավանեսյան**

**Կատարի Պետության  
կառավարության կողմից**



**Նախարար՝ Հանան Բինթ**

**Մուհամեդ Ալ-Կուվարի**



**AGREEMENT  
ON MUTUAL COOPERATION  
IN THE FIELDS OF HEALTH  
BETWEEN  
THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA  
AND  
THE GOVERNMENT OF THE STATE OF QATAR**

The Government of the Republic of Armenia, represented by the Ministry of Health  
And  
The Government of the State of Qatar, represented by The Ministry of Public Health  
Hereinafter referred to as the “Parties”

**Within** the framework of boosting bilateral relations and reinforcing cooperation  
between the two countries;

**Recognizing** the importance of public health and improving health services for the  
benefit of the current and future generations;

**Believing** that the improvement of public health and health services can be facilitated  
through close cooperation between the two parties;

**Willing** to develop health services, health promotion and wellness, and other topics of  
mutual interest;

**And desiring** to further strengthen cooperation in the field of health and medical  
research;

Have agreed on the following:

**Article 1  
Objectives**

To achieve the objectives set forth in this Agreement, the Parties shall cooperate in the  
following areas, in addition to any other emergency or important areas:

1. Research in healthcare field, technology, healthcare systems and research  
related to the application of primary healthcare systems.

2. Exchange of information related to health programs in the two countries, as well as the exchange of medical and scientific magazines, journals, publications and newsletters issued in both countries.
3. Standardization of medical information systems and epidemiology to include communications, statistical methods and information exchange.
4. Maintaining the quality standards, specifications and level of the provided healthcare.

## **Article 2**

### **Areas and Forms of Cooperation**

First: The Parties agreed to cooperate in areas including, but not limited to, the following topics:

1. Healthcare infrastructure.
2. Prevention and treatment of diseases.
3. Digital health.
4. Medical education, training and continuous professional development.
5. Genomics, genetics and personalized medicine.
6. Anti-microbial resistance.
7. Public health.
8. Health insurance.
9. Neurosciences
10. Medical Tourism

Second: The Parties agreed that the cooperation arising from this Agreement shall take any of the following forms:

1. Medicine and research.
2. Exchange of expertise.
3. Mutual visits of delegations.
4. Holding meetings between representatives of the central authorities of both Parties and other experts the same field.
5. Organizing and participating in conferences, symposiums, seminars and panel discussions.
6. Training and retraining of medical staff.
7. Exchange of lecturing and training specialists, as well as students of medical institutions.
8. Public- private partnerships
9. Investments in healthcare.
10. Any other related forms of cooperation, and of mutual interest to the Parties.



**Article 3**  
**Financing**

Each Party shall bear its own expenses, related to the implementation of programs and activities in accordance with this Agreement, unless the Parties decide otherwise, or other means of financing are available for this purpose.

**Article 4**  
**Supervision and Follow-up**

The Parties shall set up a joint committee, comprised of equal number of representatives designated by the Parties. The committee shall hold its meetings when necessary, alternatively in the Republic of Armenia and the State of Qatar to supervise the implementation of this Agreement and to further elaborate the details of the cooperation in this Agreement.

**Article 5**  
**Settlement of Disputes or Conflicts**

Any dispute or conflict may arise between the Parties concerning the implementation of the provisions of this Agreement shall be amicably settled through diplomatic channels.

**Article 6**  
**Amendments**

The provisions of this Agreement or any of its texts may be amended upon mutual written consent of the two Parties. Such amendment shall enter into effect according to the same procedures stipulated in Article 7 of this Agreement.

**Article 7**  
**Entry into force, duration and termination**

1. This Agreement shall enter into force on the date of the receipt, through diplomatic channels, of the last written notification of one Party to another on the completion of its respective internal legal procedures necessary for the entry into force of this Agreement in the two countries.
2. This Agreement shall remain valid for three (3) years and shall be automatically renewed for (a) similar period(s), unless one of the Parties notifies the other in

writing, through diplomatic channels, of its intention to terminate it, at least six (6) months prior to the date of its termination or expiration.

3. The termination or expiration of this Agreement shall not affect the implementation of the activities and programs already initiated in its framework and not completed by the date of termination, until their completion, unless the Parties agree otherwise in writing.

**In witness thereof**, the undersigned authorized by their respective Governments have duly signed this Agreement.

This Agreement is issued and signed in Doha on 13<sup>th</sup> of June, 2022, in two original copies in both Armenian, Arabic and English languages, each equally authentic. In case of divergence in interpretation or application of the provisions of the present Agreement, the English text shall prevail.

**For the Government of  
the Republic of Armenia**



**Minister H.E. Anahit Avanesyan**

**For the Government of  
the State of Qatar**



**Minister H.E. Hanan Bint  
Mohammed Al-Kuwari**

# اتفاقية للتعاون المشترك في مجالات الصحة بين حكومة جمهورية أرمينيا و حكومة دولة قطر

إن حكومة جمهورية أرمينيا وتمثلها وزارة الصحة،  
وحكومة دولة قطر وتمثلها وزارة الصحة العامة،  
والمشار إليهما فيما بعد بـ "الطرفان"،  
في إطار دعم العلاقات الثنائية وتعزيز التعاون بين البلدين،  
وإدراكاً منهما بأهمية الصحة العامة وتحسين الخدمات الصحية لصالح الأجيال الحالية  
والمستقبلية،  
وإيماناً منهما بأن تحسين الصحة العامة والخدمات الصحية يمكن تسهيلها عن طريق التعاون  
الوثيق بين الطرفين،  
ودعماً منهما للخدمات الصحية، وسبل التمتع بالصحة، والمواضيع الأخرى ذات الاهتمام  
المشترك،  
ورغبةً منهما في تعزيز التعاون في المجال الصحي والبحوث الطبية،  
قد اتفقتا على ما يلي:

## مادة (1) الاهداف

- لتحقيق الأهداف الواردة بهذه الاتفاقية، يتعاون الطرفان في المجالات التالية إلى جانب أي  
مجالات طارئة أو هامة أخرى:
- 1- البحوث في مجال الرعاية الصحية، والتكنولوجيا، وأنظمة الرعاية الصحية والبحوث  
المتعلقة بتطبيق أنظمة الرعاية الصحية الأولية.
  - 2- تبادل المعلومات المتعلقة بالبرامج الصحية في الدولتين إلى جانب تبادل المجالات  
والنشرات والإصدارات الطبية والعلمية التي يتم إصدارها في الدولتين.
  - 3- توحيد أنظمة المعلومات الطبية وعلوم الأوبئة لتشمل الاتصالات، وطرق الإحصاء  
وتبادل المعلومات.
  - 4- التقيد والالتزام بمعايير جودة، ومواصفات ومستوى الرعاية الصحية التي يتم تقديمها.



## مادة (2)

### مجالات وأشكال التعاون

أولاً: اتفق الطرفان على التعاون في المجالات الآتية، والتي تشمل على سبيل المثال لا الحصر، المواضيع التالية:

1. البنية التحتية للرعاية الصحية.
2. الوقاية والعلاج من الأمراض.
3. الصحة الرقمية.
4. التعليم الطبي والتدريب والتطوير المهني المستمر.
5. علم الجينوم، وعلم الوراثة والطب الشخصي.
6. مقاومة مضادات الميكروبات
7. الصحة العامة.
8. التأمين الصحي.
9. علم الأعصاب.
10. السياحة العلاجية.

ثانياً: اتفق الطرفان على أن يتخذ التعاون الناشئ عن هذه الاتفاقية أياً من الأشكال التالية:

1. الطب والبحوث.
2. تبادل الخبرات.
3. الزيارات المتبادلة للوفود.
4. إقامة الاجتماعات بين ممثلي الهيئات المركزية للطرفين وغيرهم من الخبراء في ذات المجال.
5. تنظيم المؤتمرات والندوات وحلقات النقاش والمشاركة فيها.
6. تدريب وإعادة تدريب الكادر الطبي.
7. تبادل المختصين في إلقاء المحاضرات والتدريب، وطلاب المؤسسات الطبية.
8. الشراكة بين القطاع العام والخاص.
9. الاستثمار في الرعاية الصحية.
10. أي أشكال أخرى للتعاون ذات الصلة وذات اهتمام مشترك للطرفين.

## مادة (3)

### التمويل

يتحمل كل طرف التكاليف المالية الخاصة به والمتعلقة بتنفيذ الأنشطة والبرامج وفقاً لهذه الاتفاقية ، ما لم يتفق الطرفان على خلاف ذلك أو توافرت وسائل تمويل أخرى لهذا الغرض.

#### مادة (4) الإشراف والمتابعة

يقوم الطرفان بتشكيل لجنة مشتركة تضم عدداً مكافئاً من الممثلين الذين يتم تعيينهم من قبل الطرفين، وتعد هذه اللجنة اجتماعاتها عند الضرورة بالتناوب بين جمهورية أرمينيا ودولة قطر للإشراف على تنفيذ هذه الاتفاقية ودراسة تفاصيل التعاون وفي إطار هذه الاتفاقية.

#### مادة (5) تسوية الخلافات أو النزاع

أي خلاف أو نزاع قد ينشأ بين الطرفين بشأن تنفيذ أحكام هذه الاتفاقية يتم تسويته ودياً عبر القنوات الدبلوماسية.

#### مادة (6) التعديل

يجوز تعديل أحكام هذه الاتفاقية أو أي نص من نصوصها باتفاق الطرفين كتابياً، وتدخل هذه التعديلات حيز النفاذ وفقاً لذات الإجراءات المنصوص عليها في المادة (7) من هذه الاتفاقية.

#### مادة (7) نفاذ الاتفاقية وسريتها وانتهائها

1. تدخل هذه الاتفاقية حيز النفاذ اعتباراً من تاريخ استلام أي من الطرفين لآخر إخطار كتابي من الطرف الآخر، عبر القنوات الدبلوماسية، يفيد بإتمامه كافة الإجراءات القانونية اللازمة لنفاذ هذه الاتفاقية، في كلا البلدين.


2. وتظل هذه الاتفاقية سارية المفعول لمدة (3) ثلاث سنوات، وتجدد تلقائياً لمدة أو لمدد أخرى مماثلة، ما لم يخطر أحد الطرفين الطرف الآخر، كتابياً، برغبته في إنهائها، وذلك بفترة (6) ستة أشهر على الأقل قبل تاريخ إنهائها أو انتهاء مدة سريتها، عبر القنوات الدبلوماسية.

3. ولا يؤثر إنهاء أو انتهاء هذه الاتفاقية على إتمام الأنشطة والبرامج التي تم الاتفاق عليها مسبقاً في إطار هذه الاتفاقية ولم يتم الانتهاء من إنجازها مع تاريخ إنهاء الاتفاقية، وذلك لحين استكمالها ما لم يتفق الطرفان على خلاف ذلك كتابةً.

وإشهاداً على ما تقدم، قام المفوضان أدناه، والمخولان من قبل حكومتيهما بالتوقيع على هذه الاتفاقية.

حررت هذه الاتفاقية ووقعت في الدوحة بتاريخ 13 يونيو 2022م، من ثلاث نسخ أصلية بكل من اللغات الأرمينية والعربية والإنجليزية ولكل منها ذات الحجية. وفي حالة الاختلاف في تفسير أو تطبيق أحكام هذه الاتفاقية، يرجح النص المحرر باللغة الانجليزية.

عن  
حكومة دولة قطر



د. حنان بنت محمد الكواري  
وزير الصحة العامة

عن  
حكومة جمهورية أرمينيا



أناهيط أفانيسيان  
وزير الصحة



Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2022 թվականի հունիսի 13-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև ստորգրասպահության բնագավառում համագործակցության վերաբերյալ» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարության  
միջազգային պայմանագրերի և  
իրավունքի վարչության պետի պաշտոնակատար՝**



**Վահագն Փիլիպոսյան**